



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

**ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՒ  
ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՐՈՒՍԵ**

Հարություն Սելիմյան

Ապրիլ 2009-ը հարիւրերորդ ամեակն է Ատանայի կոտորածին, որուն զոհ գացին Ատանայէն եւ շրջակայքէն շուրջ 30,000 հայեր: Ասիկա 1894-96 Համիտեան ջարդերէն ետք եւ Սուլթան Համիտի գահընկեցութենէն ետք սանձազերծուած առաջին լայնածաւալ կոտորածն էր, որ տեղի ունեցաւ 1909-ի Ապրիլին: Իթթիհատականները, որոնք Յունիս 10, 1908-ին «Ազատութիւն եւ հաւասարութիւն» լոզունգներուն ներքոյ կայսրութեան ժողովուրդները ոգետորելով տիրացած էին իշխանութեան, սկզբնական շրջանին ձեւացուցին թէ իբր իրենք հայ եւ թուրք ժողովուրդներու եղբայրութեան ջատագովն են, ինչը գայրոյթ եւ ատելութիւն յառաջացուց թուրք ծայրահեղականներու քով, որոնք ապրիլ 1909-ին կազմակերպեցին Ատանայի կոտորածը: Մինչեւ ամսուան վերջը, զոհուածներուն թիւը հասաւ 30,000-ի, իսկ ինչո՞ւ յատկապէս Ատանան ընտրուեցաւ անխնայ կոտորած իրագործելու որպէս վայր: Բազմազգ Ատանայի մէջ, ուր կողք-կողքի կ'ապրէին՝ Հայեր, Թուրքեր, Հոյներ, Մակեթոնացիներ եւայլն: Հայերը ունէին ծաղկուն գիւղեր եւ բարգաւաճող տնտեսութիւն, որը նախանձի եւ ատելութեան առիթ հանդիսացաւ տեղւոյն թուրք ազգայնամուլներուն քով: Ատելութեան զոհ դարձաւ ոչ միայն հայ ազգաբնակչութիւնը, այլ անոնց ինչքն ու ունեցուածքը:

Հայերս կը սպանուէին ամէն ուր՝ գիւղերուն, քաղաքներուն, իրենց արտերուն մէջ: Գործընթացը շատ յստակ էր թուրքերուն համար. հայերուն անուանացանկը գտնել, սպաննել բոլորը, դիակները հաշուել, գտնել պակտող անձերը, զանոնք եւս ոչնչացնել, անունները ջնջել ցանկէն, այրել փաստաթուղթերն ու տիրանալ անոնց ինչքերուն: Թուրքերը նոյնիսկ ոչնչացուցած էին հայերուն բոլոր դրամատնային փաստաթուղթերը, որպէս զի ջարդելէն ետք ոչ ոք կարենար իր իրաւունքը պահանջել: Այսպիսով՝ զրկելով հայութիւնը իր ամէն տեսակի սեփականութիւններէն եւ ձերբազատուելով անոնցմէ:

Ատանայի մէջ կատարուած վայրագութիւններուն դէմ պայքարիլը անկարելի եղաւ փոքր գիւղերու մէջ, ուր հայերը վայրագօրէն մորթուեցան: Երկու գրեթէ ամբողջութեամբ հայաբնակ գիւղաքաղաքներ՝ Հաճինն ու Տէօրթէօլը միայն կրցան պայքարիլ եւ խուսափիլ անտարակոյս կոտորածէն: Անոնց տասը հազար հայ բնակչութիւնը հերոսաբար կրցաւ հեռու պահել եօթ հազար թուրք զինեալ խուժանին, որոնք շրջապատած էին շրջանն ու անջատած ջուրի մատակարարումը:

Ատանայի կոտորածը ի յայտ բերաւ Իթթիհատականներուն իսկական դիմագիծը, ուր ազատութիւն, արդարութիւն, եղբայրութիւն լոզունգներուն տակ բացայայտուեցաւ Օսմանացիներու իսկական թշնամական կեցուածքը քրիստոնէական փոքրամասնութիւններու եւ անոնց լայնամիտ ու յառաջդիմական գաղափարներուն հանդէպ: Կայսրութեան մէջ հակառակ սահմանադրական կարգի վերականգնման, վայրագութիւններու ուրուականը վերստին յայտնուեցաւ, այս անգամ պետական ուժի կառուցուած տեսքով:

Իթթիհատ Վէ Թարաքքէի (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) երիտասարդ Թուրքերու վարչակազմը թէեւ առ երեսոյթ ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն կը քարոզէր, սակայն ըստ էութեան ան փոքրամասնութիւններու հակառակ էր: Երիտասարդ Թուրքերու ծածուկ նպատակն էր ձուլել ոչ-իսլամ տարրերը եւ համաթրքական հսկայ կայսրութիւն մը ստեղծել: Այդ պատճառով էր որ երբ 1909-ի Ապրիլի 1-ին թուրքերու առաջին յարձակումը սկսաւ Ատանայի հայկական թաղերուն վրայ, թուրք ոստիկանութիւնը միացաւ խուժանին եւ մասնակցեցաւ ջարդերուն: Անտարակոյս, Իթթիհատականներ լռելեան իրենց հաւա-

նութիւնը տուած էին Ատանայի Կոտորածին նկատմամբ: Երեսուցները փրկելու համար էր, որ անոնք դատապարտեցին պատահած աղէտը: Երբ հայ եկեղեցական եւ աշխարհական ղեկավարներ իրենց բարկութիւնը յայտնեցին եւ իրենց բողոքի ձայնը բարձրացուցին, անոնք ուրացան ջարդարարի դերը եւ համաձայնեցան քննիչ յանձնախումբ մը նշանակել՝ ատենապետութեամբ երեսուցիսան Յակոբ Պապիկեանի: Պապիկեանի տեղեկագիրը դժբախտաբար լոյս չտեսաւ. քանի որ տեղեկագիր պատրաստող հայ երեսուցիսանը առաւօտ մը իր ննջարանին մէջ անյայտ պայմաններուն մէջ խեղդամահ գտնուեցաւ:

Աւելի ուշ, 1909 թ-ի Յուլիսի 17-ին, թուրքական իշխանութիւնները հեռագիր-նամակ մը կը ստանան, ստորագրուած զանազան եկեղեցականներու կողմէ, որուն պարունակութիւնը հետեւեալն էր.

Ատանայի ու շրջակայքին մէջ, առանց հիմնաւոր պատճառներու, մարդիկ ու սեփական ստացուածքներ ահաւոր վնասի կ'ենթարկուին: Քրիստոնէաներուն հոն մնալու եւ ապահովութեան հարցը զինուորական դատարանի խնդիրն է: Մենք յուսահատ ենք, քանի որ ոճրագործները բացարձակապէս չեն դատապարտուիր, հետևաբար, իրենց անպատժելիութիւնը աւելի կը ոգևորէ չարագործները: Պետութիւնը հակառակը՝ ոճրագործներ կ'որսայ, որոնք իսլամ, տզէտ ու աղքատ գիւղացիներ են ու անոնցմէ կը պահանջէ իրենց տուած հրահանգներուն հետեւիլ եւ անոնք ալ անգիտակցաբար ոճիրներ կը գործեն: Փոխարենը անմեղ Հայերն են, որ զրպարտութեան կամ պարգապէս ինքնապաշտպանութեան արդիւնքին մէջ կը դատապարտուին: Զինուորական դատարանը դժբախտաբար յանցաւոր կը գտնէ զանոնք: Այս պարագային որո՞ւ կրնանք դիմել ու պատմել մեր վատ կացութեան մասին: Ինչպէ՞ս կրնանք մեր անօգնական ժողովուրդին հանգիստը ապահովել:

Ի սէր Աստուծոյ, խղճացէ՛ք:

- Սուրիոյ Կաթողիկէ Պատրիարքի ներկայացուցիչ: Գլխաւոր քահանայ՝ Հայր Ֆիլիպոս
- Բողոքական եկեղեցական պետ՝ Համբրըսըմ
- Հայ կաթողիկէ եպիսկոպոս՝ Եպիսկոպոս Պօղոս
- Սուրիոյ Լուսաւորչական Պատրիարքի ներկայացուցիչ՝ Հայր Մանսուր
- Յոյն Կաթողիկէ կղերական պետ՝ Հայր Իլիաս
- Հայկական եպիսկոպոսական ներկայացուցիչ՝ Հայր Արաս
- Քիլիսանիներու Պատրիարքի ներկայացուցիչ՝ Հայր Ստեփան

Յունիս 17.1909

Belge No : 6

		<p>L'Etat n'accepte aucune responsabilité à raison du service de la télégraphie</p>	
<p>شماره برگه</p>	<p>موضوع</p>	<p>عدد کلمات</p>	<p>نوع کلام</p>
<p>شماره برگه</p>	<p>موضوع</p>	<p>عدد کلمات</p>	<p>نوع کلام</p>
<p>N° du dépôt</p>	<p>Nombre des mots</p>	<p>Group</p>	<p>Mode de dépôt</p>
<p>شماره برگه</p>	<p>عدد کلمات</p>	<p>نوع کلام</p>	<p>نوع کلام</p>
<p>شماره برگه</p>	<p>عدد کلمات</p>	<p>نوع کلام</p>	<p>نوع کلام</p>
<p>شماره برگه</p>	<p>عدد کلمات</p>	<p>نوع کلام</p>	<p>نوع کلام</p>
<p>شماره برگه</p>	<p>عدد کلمات</p>	<p>نوع کلام</p>	<p>نوع کلام</p>
<p>شماره برگه</p>	<p>عدد کلمات</p>	<p>نوع کلام</p>	<p>نوع کلام</p>
<p>شماره برگه</p>	<p>عدد کلمات</p>	<p>نوع کلام</p>	<p>نوع کلام</p>

*Handwritten text in Ottoman Turkish script, including a circular seal and various signatures and dates.*

**Պոլսոյ Ռուս Դեսպանը կըրտ:**

Թուրքական Խորհրդարանի նախկին անդամ Ջոհրապ, եւ հայոց պատրիարքարանի խառն ժողովի անդամ Մարտիկեան ինձի կուզան ըսելով թէ՝ նոյնիսկ Ատանայի 1909 թ-ի սարսափելի կոտորածը ներուցաւ թուրքերուն ու մեղքը հին վարչակարգին վերագրուեցաւ: Յետագայ հանգամանքները հայերուն ստիպեցին դառնօրէն զղջալ իրենց դիրաւիւստութեան համար: Քիւրտերը առաջուայ պէս կը թալանեն, կը բռնաբարեն ու կը սպաննեն անպաշտպան հայ բնակչութիւնը, իսկ թուրքերուն վարչութիւնը երկերեսանիօրէն ներկայ կըլլայ այդ բոլոր սարսափելի իրադարձութիւններուն՝ ոչ մէկ միջոցի չդիմելով առոնց առաջքը առնելու համար ... կուժգնանան նոր ջարդերու մասին չարագուշակ լուրերը ...

Հայոց զաւառներուն մէջ բարենորոգումներու մասին հռչակագիրը, որ հրապարակեց

Սուլթան Ապտուլ Համիտ 1895 թ-ի Հոկտեմբեր 20-ին՝ Ռուսաստանի, Ֆրանսայի ու Անգլիոյ ճնշման տակ, մնաց որպէս մեռած տառ ...

Անկասկած, Ատանայի Կոտորածը, նախափորձը դարձաւ երիտասարդ թուրքերու համաթուրանական քաղաքականութեան: Քանի մը տարի ետք՝ հայկական Մեծ Եղեռնը, լրումը պիտի ըլլար իրենց կանխամտածած ցեղասպանութեան, որով կը յուսային լուծել Հայկական հարցը:

Դժբախտաբար, մեր եկեղեցական եւ աշխարհական ղեկավարութեան մեծամասնութիւնը միամտաբար խարուեցաւ կեղծաւոր եւ նենգամիտ Իթթիհատական Երիտասարդ Թուրքերէն եւ չկրցան նախատեսել վերահաս վտանգը:

- Արեւմտահայոց Պատրիարք Յովհաննու Արքեպիսկոպոս Արշարունին՝ Կաթողիկոս Գեորգ Սուրէնեանին:

Կը սպասէինք ազգովին եւ յի յոյսով, որ Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետքը, որ քանդեց հայոց արեւմբ ողողում բռնապետական նախորդ դրութիւնը, այլեւս վերջ գտնեն այդ անլուր չարիքները, սակայն, ցաօք սրտի, կը հարկադրուինք հաստատելու, որ հայոց նկատմամբ որեւէ նպաստաւոր փոփոխութիւն չեղաւ, եւ Ատանայի ահաւոր կոտորածով սկսաւ այնպիսի նոր շրջան մը, ուր անպակաս եղան ամէնուրեք նորանոր չարագործութիւններ ...

Ըստ սովորականին, դարձեալ խոստումներ եղան ազգու հրամաններ ուղղելու գաւառական իշխանութեանց, պատժելու եւ զսպելու չարագործները, հրամաններ, զորս փութացինք հաղորդել մեր առաջնորդարաններուն, եւ սակայն ի պատասխան Մուշէն, Բաղէշէն եւ Սղերղէն գուժկան հեռագիրներ հասան մեզի, նոր ի նորոյ ծանուցող, թէ ոչ մէկ գործադրութիւն տեղի ունեցած է, թէ վիճակը կը շարունակուի եւ թէ ժողովուրդը նոյնիսկ ընդհանուր կոտորածի վտանգին մատուած է:

Երբ Թուրք խուժանը հայկական թաղերու վրայ յարձակում գործեց 1909-ի Ապրիլ 1 թուականին, հայերը ինքնապաշտպանութեան դիմեցին: Այդ առէն, Երիտասարդ Թուրքերու կառավարութիւնը անգլիական հիւպատոսին միջնորդութիւնը խնդրեց որ, խտովութիւններուն վերջ դնելու համար, հայերը իրենց զէնքերը յանձնեն կառավարութեան: Հիւպատոսը իր տխուր առաքելութիւնը կատարեց եւ հայեր յանձնեցին իրենց զէնքերը:

Թրքական ջարդերը շարունակուեցան եւ Երիտասարդ Թուրքերու կառավարութիւնը գործնապէս չմիջամտեց: Արդիւնքը ահաւոր եւ եղեռական եղաւ: Ատանայի նահանգին մէջ տարբեր քաղաքներու, գիւղերու եւ աւաններու մէջ մօտաւորապէս 30,000 անմեղ հայեր գոհ գացին: Եկեղեցիներ, դպրոցներ, բարեսիրական եւ մշակութային կեդրոններ քանդուեցան: Բազմաթիւ որբեր եւ որբնայրիներ անպատասպար մնացին:

- «Թիֆլիսեան Թերթիկ»-ը իր 1909թ-ի 93-րդ թիւին մէջ կը հաղորդէ.  
*Կ. Պոլիս, 26 Ապրիլ, 1909 թ.*

Թերթերը Ատանայի, Անտիոքի եւ Սուրիոյ զանազան վայրերու մէջ եղած սարսափելի կոտորածներու մանրամասն նկարագրութիւնները կու տան: Ըստ հաշուառումներուն, 35,000-էն անլի մարդ սպաննուած է եւ տասնեակներով գիւղեր այրած ու ատերուած են: Ատանան բոլորովին ոչնչացած է ... վարչական կեդրոն, բանակաւի ու հացի աշխոյժ առետուրի քաղաք Ատանան...

1909 թ-ի Ապրիլ 1-ի երեկոյեան, Ատանայի փողոցներուն մէջ իսլամները խիստ անբարեացակամ ու կռուարար տրամադրութիւններ կը դրսեւորեն: Թուրքական թաղերէ պատահաբար անցնող հայեր, կը սպաննուին ... լուրը կայծակի արագութեամբ կը տարածուի եւ հայերը արագ կը գոցեն իրենց խանութներն ու արհեստանոցները: Մարդիկ կը պատրաստուին իրենց տուններուն մէջ: Առաւօտ կանուխ կը սկսի խուժանին յարձակումը զոց

խանութներուն վրայ:

Գործողությունները անվրէպ միայն հայերու խանութներն է որ կոչնչացնեն, յատկօրէն զանց առնելով իսլամներուն ունեցուածքը:

Խանութներէն՝ կարգը տուններուն կը հասնի ... կը յարձակին կացիններով, մահակներով ու զէնքերով եւ կը կոտորեն մոլուցքով, առանց խնամելու: Եփոթած ու խելակորոյս հայերը պաշտպանութեան կը դիմեն իրենց մտերիմ իսլամներուն, նաև յատուկէն երուպացիներու ... անոնք, որոնք զէնք ունէին, մոռնալով խանութ ու սեփականութիւն, հայկական թաղամասերու մէջ դիրքեր կը գրաւեն ու ինքնապաշտպանութեան կ'անցնին: Յաջորդ օրը ասոնց վիճակը կը վատթարանայ դրացի հայկական գիւղերն ու ագարակներուն աւերումով, ուրկէ 5-7 հազար կին ու երեխայ կու գան քաղաք՝ Ատանա:

1909 -ին, Կիպոնս ընտանիքը ականատեսը կ'ըլլայ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած Հայկական կոտորածներուն, որոնց մասին աւելի ուշ Հէլէն Կիպոնս Ամերիկացի հեղինակ ու թղթակից, 1917- ին գիրք մը կը գրէ Թարսուսի Կարմիր Գորգերը խորագրով, որ իր նամակներու հաւաքածոն է, ուր մանրամասն կը նկարագրէ այդ օրերու դէպքերը: «Կրակոցները սկսան ու շարունակուեցան ամբողջ օրը: Հրացանածգութեան ձայներուն հետ միատեղ, կը լսուէին մեռնողներուն աղաղակները:

Շատեր վիրաւորուած էին. մեծ մասը իրենց ամուսիններն ու երեխաները կը փնտրէին ու չէին գտներ: Տղամարդիկ իրենց տկար կիները կրնակներուն վրայ շարկած, հոգնած երեխաներ չափահասներուն հետ դժուարութեամբ կը փորձէին քայլ պահել: Խումբերը լեցուն էին տարեցներով, հիւանդներով, անդամալոյծներով ու անօգնականներով, որոնք այս բոլորով հանդերձ, Աստուածատուր ուժով մը օժտուած ըլլային կարծես:»

Երեք օր ու գիշեր կոտորածն ու աւերածութիւնը քաղաքը դժոխային խառնարանի կը վերածեն: Կոտորած, հրդեհ, թալան, կին-երեխայ, մեծ ու պզտիկ ... մղձաւանջը կը շարունակուի, իսկ իշխանութիւններուն միակ օգնութիւնը կ'ըլլայ սպաննուած հայերուն դիակները սայլերուն վրայ բարձրելն ու գետը թափելը...

Ապրիլի 14-ին, իրաճգութիւն կը սկսի հայկական թաղամասի բոլոր կողմերէն: Հրդեհի խոշոր կրակէ լեզուները կը լափեն քաղաքը, իսկ տեղական ղեկավարութիւնը հրշէջներու միջոցաւ ոչ թէ ջուր, այլ նավթ կը լեցնէր քարաշէն տուններուն, եկեղեցիներուն ու դպրոցներուն շուրջ ...

Քաղաքը կ'աւերուի, կը կողոպտուի, բնակիչները կը սպաննուին ... Ատանայի կոտորածը ազդանշան էր կարծես, որ կեդրոնէն տարածուեցաւ ու հասաւ գաւառին խորերը... Ատանա քաղաքին մէջ հրոյ ճարակ դարձած են 1190 տուն, 6 եկեղեցի եւ հայկական մեծ շուկան:

Ատանայի Կոտորածը մեծ կորուստներ պատճառեց Կիլիկիոյ բովանդակ հայութեան: Հայ երեք յարանուանութիւններն ալ մեծ կորուստներ ունեցան: Բայց բաղդատաբար աւելի մեծ եղաւ Կիլիկիոյ շրջանի Հայ Անտարանականութեան կորուստը, Կիլիկիոյ Հայ Անտարանական եկեղեցիները, հաստատութիւնները եւ կազմակերպութիւնները կորսնցուցին իրենց հոգեւոր եւ աշխարհական ղեկավարներ 50 առ հարիւրը: Օսմանիէ քաղաքին մէջ, Հայ Անտարանական եկեղեցւոյ մէջ Ապրիլ 14-ի արշալոյսին հրկիզուեցան 7 հոգեւոր հովիւներ եւ 4 աշխարհական ղեկավարներ: Երեք այլ վայրերու մէջ անգթօրէն սպաննուեցան 13 այլ հովիւներ եւ 9 այր եւ կին եկեղեցական պատուիրակներ եւ երկու ամերիկացի միսիոնարներ:

Այս աղէտը կը զուգահիշէր Կիլիկիոյ Հայ Անտարանական Միութեան 1909-ի տարեկան համաժողովին: Նախապէս որոշուած էր այս համաժողովը Մարաշ գումարել Յունիս ամսուն վերջաւորութեան: Բայց որոշ նկատումներով, ժողովին վայրն ու թուականը

փոխուեցաւ: Որոշուեցաւ համաժողովը գումարել Ատանա քաղաքին մէջ 1909-ի Ապրիլի կիսուն:

Կիլիկիոյ տարբեր քաղաքներէն ճամբայ ելած էին պատուիրակները դէպի Ատանա: Այնթապի եւ Մարաշի կողմերէն մեկնող կարաւանները Ապրիլ 13-ի երկեղեցան, Օսմանիէի մէջ իրար հանդիպեցան այն յոյսով որ յաջորդ օրը ճամբայ պիտի ելլէին դէպի իրենց ժամադրավայրը: Բայց այդ քստմնելի գիշերը, թուրք ռմրագործներու ոհմակը յարձակեցաւ Հայ Անտարանական եկեղեցւոյ շէնքին վրայ, ուր օթեանած էին Միութեան պատուիրակներու մէկ մասը, եւ կրակ տալով շէնքին ամէն կողմերէն, հրկիզեց անմեղ անձեր: Միս քաղաքներէ ճանապարհի վրայ գտնուող եկեղեցական եւ աշխարհական պատուիրակները անխղճօրէն խոշտանբուեցան ու սպաննուեցան երեք այլ վայրերու մէջ՝ Չայրը Աղզը, Սայ Կիչիտ եւ Համիտիյէ:

• Մէջերէնք Կարապետ Գ. Տաղլեանի 1917-ի Նյու Եօրքի ԱլՖրէտ Համալսարանի մէջ տուած դասախօսութենէն:

«Երբ կը շրջէի երկրի այն մասին մէջ, ուր ջարդերը տեղի ունեցած էին, շատ մը մարդկային կմախքներ տեսայ հոս ու հոն: Գիւղերէն մէկուն մէջ, կանգ առի հանգիստի համար, ու թեմնիի մը տակ նստեցայ ... դիմացս այրած բողոքական եկեղեցի մըն էր, ուր տասը կղերականներ համաժողովի մեկնումի իրենց ճամբուն վրայ, նոյնպէս այրած էին: Համալսարանի դասախօսներէն մին ալ այդ խումբին մէջ էր, զիս տարին այն հայկական եկեղեցին, ուր 250 մարդ այրած էին, պատերուն վրայ դեռ կարելի էր մարդկային ճարպին հետքերը տեսնել:»

• Ստորեւ կը գտնէք նահատակներուն անունները, պաշտօնավայրերը եւ իրենց նահատակութեան վայրը:

**Օսմանիէի մէջ նահատակ Հովիւներն էին:**

- ՓրոՖ. Սարգիս Լեւոնեան - Այնթապի Կեդր. Թուրքիոյ Գոլէճին ուսուցչապետը,
- Վեր. Կիրակոս Ժամկոչեան- Հովիւ՝ Սեւերեկի Հայ Անտ. Եկեղեցւոյ,
- Վեր. Նազարէթ Տեղինեան- Հովիւ՝ Մարաշի Հայ Անտ. Երրորդ Եկեղեցւոյ,
- Վեր. Զաքարիա Պետրոսեան- Հովիւ՝ ՈւրՖայի մօտ Կարմուռի Հայ Անտ. Եկեղեցւոյ,
- Վեր. Ներսէս Գույումճեան- Հովիւ՝ ՈւրՖայի Ասորի Բողոքական Եկեղեցւոյ,
- Վեր. Սեդրակ Էքմէքճեան- Հովիւ՝ ՈւրՖայի Հայ Անտ. Առաջին Եկեղեցւոյ:

**Չայրը Աղզը կոչուած վայրը (Օսմանիէի եւ Համիտիյէի մէջտեղ) նահատակ Հովիւներն էին.**

- Վեր. Յակոբ Գունտաքճեան- Հովիւ՝ Հասանալէյիի Հայ Անտարանական Եկեղեցւոյ,
- Վեր. Ստեփան Յովհաննէսեան- Հովիւ՝ Խառնէի Հայ Անտ. Եկեղեցւոյ,
- Պատ. Թագուր Յակոբեան- Հովիւ՝ Պաղչէի Հայ Անտ. Եկեղեցւոյ,
- Պատ. Կարապետ Քիւփէլեան- Հովիւ՝ Օսմանիէի Հայ Անտ. Եկեղեցւոյ:

**Սայ Կէչիտի մէջ նահատակուեցան.**

- Պատ. Լեւոն Սողովմէեան- Հովիւ՝ Հաճնոյ Հայ Անտ. երկրորդ Եկեղեցւոյ,
- Պատ. Ասատուր Թօփալեան- Հովիւ՝ Տէքէի Հայ Անտ. Եկեղեցւոյ,
- Պատ. Մելիտոն Մալեան- Հովիւ՝ Միսի Հայ Անտ. Եկեղեցւոյ,
- Պատ. Արտաշէս Պոյաճեան- Հովիւ՝ Շարի (Կոմանա) Հայ Անտ. Եկեղեցւոյ,
- Պատ. Յակոբ Ալպարեան- Հովիւ՝ Կապանի Հայ Անտ. Եկեղեցւոյ,
- Պատ. Կոստանդին Սիլահեան- Հովիւ՝ Կարս-պազարի Հայ Անտ. Եկեղեցւոյ,

**Համիտիլի մէջ նահատակուեցան.**

Պատ. Մարգար Գալուստեան- Հովի՝ Համմիտիլի Հայ Աետ. Եկեղեցւոյ,  
Պատ. Յովակիմ Գայանեան- Հովի՝ Ալպուսթանի Հայ Աետ. Եկեղեցւոյ,

Հայ Աետ. նահատակ հովիւներու հետ նաեւ նահատակուեցան երկու ամերիկացի միսիոնարներ՝ Վեր. Դանիել Բաճրբա, Ատանայի շրջանի Ամերիկայի Աետարանչական կազմի ներկայացուցիչը եւ Վեր. Հենրի Մաուրըր, Հաճրնի շրջանի միսիոնարը:

Օսմանեան ղեկավարութիւնը բացարձակապէս հերքեց իր պատասխանատուութիւնը կապուած Ատանայի մէջ կայացած Ամերիկացի երկու Միսիոնարներուն սպաննութեան հետ ու ըսաւ, թէ Հայերն էին որ սպանեցին Բողոքական Միսիոնարներ Տ.Մ. Բոճերգ եւ Հէնրի Մորըր՝ « մինչ անոնք կ'օգնէին թուրք այրի կնոջ մը, իր այրուող տան կրակը մարելու:»<sup>1</sup>

Աելի ուշ, Օսմանեան կարծիքին հակադրուեցաւ ականատեսի մը՝ Ամերիկացի քահանայ Սթիւրն Թրոպիճին (Պրուքլինէն) վկայութիւնը: Ան կը նշէր, թէ Միսիոնարները սպանուեցան «Մուսուլմաններու ձեռքով. երբ կը փորձէին կրակը մարել, որ կը սպառնար արգելք հանդիսանալ իրենց առաքելութեան:»

Ըստ Էլիզապէթ Ս. Ուէպի, որ նոյնպէս դպրոցին կողմէ Միսիոնար մըն էր, Վիճակը ահաւոր էր: «Շէնքիս մէջ կիներն ու աղջիկները առանձին ու անպաշտպան էին, մինչ դուրսը դաժան ոճրագործներու խումբեր, որ դանակներ ու փամփոշտներ կը կրէին Հայերուն դէմ օգտագործելու համար, նաև ջահեր անոնց տուններուն համար:»

Բաց աստի, նահատակուեցան 13 աշխարհական պատուիրակներ (9 այր եւ 4 կին): Անտարակոյս, ասիկա մեծ հարուած մը եղաւ Կիլիկիոյ Հայ Աետարանական Միութեան համար, որուն ղեկավարութեան կէսէն աւելին բնաջնջուեցաւ ...:

Հրաշքով վերապրող հոգեւոր առաջնորդներէն մէկն էր Վեր. Համբարձում Աշճեան (1863-1938), հովիւր՝ Ատանայի Հայ Աետարանական Եկեղեցւոյ: Ինք այն բախտաւորներէն մէկը եղաւ, որ աղէտի օրերուն զոհը չդարձաւ թուրք բարբարոսութեան: Կոտորածէն ետքն այ թէն թիրախ դարձաւ յարձակումի, բայց մազապործ ազատեցաւ ստոյգ մահէն: Որպէս հեռահայեաց, խոհեմ եւ հասուն եկեղեցական ղեկավար՝ Աշճեան ընտիր առաջնորդութիւն հայթայթեց մասնատրապէս իր վերապրող համայնքի անդամներուն եւ ընդհանրապէս իր տազնապող եւ բարոյալքուած հայ հայրենակիցներուն:

Կոտորածին յաջորդող օրերուն Պատուելի Աշճեանը մեծ դեր խաղցաւ երբ Ատանայի հոգեւոր Պետերը ժողովի մը համար համախմբեց աղէտը դիմագրաւելու նպատակով, եւ այսպէս հոգեւոր Պետերու մարմին մը ծնունդ առաւ Աշճեանի աստեանադպրութեամբ: Ան թղթակցութիւններ կը կատարէր ամէնայն խոհեմութեամբ: Ան դիպուկ նամակներ ուղարկեց օրուան Թուրքիոյ պետական ղեկավարներուն ու բանակցութիւններ կատարեց պետական պաշտօնականներու հետ:

Վերոյիշեալ միացեալ ժողովներուն հետեւանքով ծնունդ առին հետեւեալ դրական կէտերը ի նպաստ հայ ժողովուրդին:

- 1) Միջ-համայնքային գործակցութեան սքանչելի մթնոլորտ
- 2) Արդիւնաբեր հայ-թուրք յարաբերութիւն
- 3) Հայ դատի հետապնդում

**1.Միջ-համայնքային գործակցութեան սքանչելի մթնոլորտ մը ստեղծուեցաւ:** Աղէտին որպէս հետեւանք, հայ համայնքները մոռցան իրար հանդէպ ունեցած իրենց ան-

հաշտութիւններն ու սերտ կապեր հաստատեցին: Ամենաշատ վնասուածը Հայ Աետ. եկեղեցին էր, հետեւաբար, հայ Առաքելական եկեղեցին իր եկեղեցաշէնքը տրամադրեց իր քոյր եկեղեցիին ազնուօրէն որր օրինակ ծառայեց փոխադարձ համագործակցութեան: Կ. Պոլսոյ հրաժարեալ պատրիարք Եղիշէ Արք. Դուրեանի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ.Տ. Սահակ Խապայեանի սիրոյ սերտ կապերը Վեր. Աշճեանի հետ սրտատուջ օրինակներ հանդիսացան միջ- համայնքային գործակցութեան:

**2. Կոտորածէն տասը ամիսներ ետք, Ատանայի նոր կուսակալ՝ Ճէմալ Պէյը հաշտութեան ճաշկերոյթ մը կազմակերպեց (Փետրուար 5- 1910-ին) ուր Վեր. Հ. Աշճեան իր ուղերձին մէջ ըսաւ:** «Ձեր ազնիւ ներողամտութիւնը հայցելով կուզեմ հետեւեալ խնդրանքը ներկայացնել: Նախ, կը խնդրեմ մեր կառավարութենէն չդատապարտէք ամբողջ ազգը գործուած ոճիրին համար: Ձայն գործող սակաւաթիւ մարդիկն են միայն մեղաւոր: Երկրորդ, պիտի խնդրէի մեր իսլամ հայրենակիցներէն իրենց շահը չփնտռեն ուրիշներու կորուստին մէջ: Ատանայի աղէտին պատճառով մենք քրիստոնէականքս մեծ կորուստներ արձանագրեցինք: Արդէօք մեր իսլամ հայրենակիցները այս դժբախտ պատահարէն վստմացան թէ, նուաստացան: Երրորդ, մենք անկեղծօրէն այս երկիրը կը սիրենք, եւ ի սր Աստուծոյ արդարութիւն կը պահանջենք: ... Եթէ, կը սիրէք ձեր հայրենիքը, եթէ կը սիրէք ձեր կառավարութիւնը, եթէ կը սիրէք ձեր Աստուածը, այլեւս վերջ տուէք այսպիսի վարմունքներու, եւ համերաշխութեամբ ապրինք եւ այս հայրենիքին տկարացման պատճառ չըլլանք ... մէկ նպատակով եւ մէկ սրտով այս նուիրական հայրենիքը ամբացնենք եւ փառաւորենք, որովհետեւ միութեամբ հաստատ կը մնանք, բաժանումով կիլնանք»:

**3. Եկեղեցւոյ առաջնորդները պահանջեցին**

- Յանցաւորներուն պատժուիլը
- Նիւթական վնասից հատուցում
- Պաշտօնական յայտարարութիւն մը թէ հայերը զոհեր էին եւ ոչ յանցաւորներ:

Վերոյիշեալ պահանջները հեռագրով հաղորդուեցան Սուլթանին, մեծ եպարքոսութեան եւ երեսփոխանական ժողովին: Այս բոլորին որպէս արդիւնք հազարաւոր ոճրագործներէն պատժուեցան 50 հոգի, որպէս նիւթական հատուցում կառավարութիւնը երկու առիթներով տուաւ 350,000 Օսմ. Ոսկի, իսկ որպէս պաշտօնական յայտարարութիւն, մեծ եպարքոս Հիւսէյն Հիւմի Փաշան յայտարարեց թէ հայերը Ատանայի դէպքին մէջ անմեղ զոհեր էին պարզապէս:

Դժբախտաբար, Երիտթուրքեր չընդունեցին իրենց դերակատարութիւնը Ատանայի Կոտորածին մէջ: Ճուտաւ Պէյ Ատանա Վիլայէթի նահանգապետի նախագահութեամբ, խորհուրդի նիստ տեղի կունենայ, ուր որոշում կառնուի պատժել հայերը (1909 ապրիլի 13.) ... ջարդեր տեղի կունենան զատկէն յետոյ, Ապրիլի 14,15,16-ին ... Ատանայի մէջ մէկ յօգունգ կը լսուէր. «Սպաննել միայն հայերը»...

Երիտթուրք Իսմայիլ Սեֆան հանդէս կուզայ հետեւեալ լկտի խօսքով. «Այն ինչ կատարուած է, դեռ անբարարար է ու ամէն ինչ չէ: Մենք միայն կարճ դադար մը առած ենք, բայց դեռ կը տեսնենք, թէ ամէնը ինչով կ'աւարտի ...»:

Ապրիլ 1909-էն - Ապրիլ 2009-ը հարիւր տարի ...: Այսօր հարիւր տարի ետք, մենք իբրեւ համայնք եւ իբրեւ ազգ՝ կանք ու կը մնանք, զոհի հոգեբանութենէն դուրս ելած՝ վերածնած ենք: Ատանայի Կոտորածին 100-ամեակը վերանորոգման տարեդարձ մըն է, մեր կորսուած իրաւունքներու պահանջատիրութեան, մեր վերանորոգման, մեր կենսունակութեան եւ վերակերտման վճռականութիւնը վկայող հանգրուան մը: Միանգամայն, սոյն հա-

րիւրամեակը անցեալէն դասեր սորվելու դիպուկ առիթ մըն է .թէ՛ մեր ազգային կենսական հարցերու մէջ միամիտ եւ պատրանախար չըլլանք, այլ միշտ իրատես եւ հեռատես, շրջահայեաց եւ իմաստուն: Օտարներու օգնութիւնը հայցենք, բայց օտարներէն փրկութիւն չսպասենք, որովհետեւ վերջին հաշուով մեր սեփական միջոցներով միայն կրնանք տիրանալ մեր իրաւունքներուն: Ուրեմն, անհրաժեշտ է միաբան ու միակամ ըլլալ: Բաւարար չէ միասնակամութեան մասին տարին օր մը կամ հազուադէպ ոգեկոչման հանդիսութեան առիթներով միայն մտածել, այլ հարկ է զայն մեր առօրեային հետ շաղկապել, միասնական ձևակառուութիւնը կանգնել հայ դատին:

Արդ, ոգեկոչենք Ատանայի Կոտորածին 100-ամեակը, յարգանքով խոնարհինք մեր նահատակներու յիշատակին առջեւ, բայց Աստուծոյ վըստահելով, ամբողջական յանձնառութեամբ, արժեւորենք մեր ներկան եւ անյողողոյ հաւատքով քալենք դէպի ապագան:

### Օգտագործուած Աղբիւրներ

«Իսլամական Զարդերուն Զոհ Կ'երթայ Հինգհազար Կեանք», Նյու Եօրք Թայմզ, Ապրիլ 21, 1909.

«Պրոքլիմէն Մարդ մը Ականատես Կ'ըլլայ Միսիոնարի մը Սպանութեան», Նյու Եօրք Թայմզ, Մայիս 2, 1909.

«Կին մը կը Եկարագրէ Խռովութիւն Ատանայի Մէջ», Նյու Եօրք Թայմզ, Մայիս 3, 1909.

Վեր. Հ. Աշճեան. «Ատանայի Եղեռնը» Նիւ Եօրք 1950, հատընտիր հատուածներ, էջ 108-112:

Տիգրան Խրոբեան, Ոսկեմատեան, Պէյրութ, 1950 Հատոր Բ. 124-125

Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի Եղեռնը եւ Գոնիայէ Յուշեր, (Նիւ Եօրք, Կոչնակ տպ., 1950) էջեր՝ 15-120

Վեր. Եղիա Ս. Քասունի, Լուսաշաիղ (Պէյրութ. Ամերիկեան Տպարան ) էջեր՝ 263-269.

Վեր. Կ. Պ. Ատանայեան, Յուշարձան (Ֆրէզնոյ, 1952), էջեր 330, 339

Գրիգոր Յ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Ջէյթուն (Նյու Եօրք, Կոչնակ տպ., 1934), էջ 929

Հայաստանի Կոչնակ (Նիւ Եօրք, Կոչնակ տպ., 1938), էջեր՝ 81-82

Դոկտ.Յակոբ Չագմարճեան, Հայ Անետարանական Ծարժումը (Ֆրէզնոյ, 1985), էջեր 81-82

Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Յիշատակարան 70-ամեակի Տօնակատարութեան (Լոս Անճէլոս, 193 6) էջեր՝ 17-53

Վեր. Պարգեւ Ն. Տարագճեան, «Վեր. Համբարձում Յ. Աշճեան», Ջանասէր, Յուլիս- Օգոստոս, 1974, էջեր՝ 254, 259 Սեպտ. - Դեկտ. 1997 էջեր՝ 365-37

Թիֆլիսեան Թերթիկ, 26 Ապրիլ, 1909.

Տիգրան Խրոբեան, Ոսկեմատեան, Պէյրութ, 1950, Հատոր Բ.

Դասախօսութիւն Կարապետ Գ. Տաղլեանի, Ալֆրետ Համալսարանի աշակերտութեան, Նյու Եօրք, Փետրուար 21, 1912.

Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում, խմբագիր՝ Մ. Ք. Ներսիսեան, 1991, Երեւան.

Էմմա Կոստանդեան, «Հարյուր Տարի Առաջ, Կամ ինչ դասեր քաղել Պատմութիւնից», «Ազգ Օրաթերթ», Ապրիլ 1, 2009.

<http://net.lib.byu.edu/~rdh7/wwi/1915/bryce/a14.htm> հատուած «The Treatment of

Armenians in the Ottoman Empire» գիրքէն, (փաստաթուղթեր ներկայացուած Viscount Bryce-ին.)

Կիպոնս, Հէլէն Տէլէնթորդ, Թարսուսի Կարմիր Գորգերը: Կնոջ մը գրառումները 1909-ի Հայկական կոտորածներուն . Նյու Եօրք: 1917, Գլուխ 8, էջ: 115-116.

Դոկտ. Բախտ Տոնէֆ, 1909: Ottoman Archives related to the Adana Massacres, Միտնի, Աւստրալիա, 2008

Harutyun Selimyan

### The Massacre of Adana and the Losses of the Armenian Evangelics

Summary

This article shows the losses of the Armenian evangelics as a consequence of Adana massacres. The author presents the details of the Adana massacres, human and material losses, the pain and grief of the Armenian people; he exhorts not to be naive in essential national questions, on the contrary always to be realistic and long-sighted, reasonable and wise. The author advises to ask for help from the foreigners, but not to expect a salvation and to acquire rights by own means; to be united and to have will, to evaluate the present and to step towards the future with unshakable belief.